ների համար, մանաւանդ նրանց, որոնք իրանց բակերում պարտէզներ չունեն: Ուռենիի ներքոյ միայնակ նստելը նոյնպէս ձանձրացրեց ինձ: Վերկացայ եւ սկսեցի փողոցի երկարութեամբ գնալ դէպի Այգեստանի զանազան կողմերը:

Զարմանալի ինքնուրոյնութիւն է ներկայացնում այստեղ կեանքը: Տարոայ այդ եղանակում մարդիկ համարեա ապրում են եւ գործում փողոցի վրայ: Ահա հիւսնը իր տան դռան հանդէպ արօր է շինում: Նրա փոքրիկ երեխաները մեծ փութով հաւաքում են տաշեղները եւ մրջնի նման կրում են դէպի տուն վառելիքի համար: Մի խումբ մարդիկ, մերկ գետնի վրայ նստած, նայում են, թէ ինչպէս է բանում հիւսնը: Մէկը աշխատում է, շատերը անգործ մտիկ են անում նրա վրայ: Փոքր-ինչ հեռու, հարթ գետնի վրայ, ածուխով ինչ-որ աղիւսակներ են գծել. քառանկիւնիների վրայ շարած են փոքրիկ գոյնզգոյն խիճեր. երկու մարդիկ այդ խիճերով «գայլ ու ոչխարէ կոչոած խաղն են խաղում, մի քանիսը նայում են նրանց խաղի վրայ: Ահա այնտեղ, փողոցի մի անկիւնում, մի ծառի տակ, նոյնպէս գետնի վրայ, թափառական ոսկերիչը սարքել է իր շարժական քուրան եւ փուքսերը: Բազմաթիւ կանայք ու աղջիկներ շրջապատել են հայ արհեստաւորին: Մէկը ինչ-որ զարդ է շինել տալիս, իսկ միւսները մեծ կարօտութեամբ նայում են: Փոքր-ինչ հեռու, նոյնպէս մի ծառի տակ, մանրավաճառ չարչին բաց է արել իր խայտաճամուկ վաճառքները: Նա եւս գլխաւորապէս գործ ունի կանանց հետ, որոնք տալիս են իրանց ձեռագործները եւ փոխարէնը գնում են զանազան իրեղէններ: Նա չէ մերժում, երբ տան երեխան գողանում է իրանց հաւերից մէկը, բերում է նրա մօտ եւ մի պատառ մաստաք է առնում: Առեւտուրը կատարեալ նահապետական է. մի նիւթ փոխւում է ուրիշ նիւթի հետ: Անցնելով այդ բոլորից, փողոցի երկարութեամբ ես շարունակում էի գնալ: Կանանցից շատերը, չդիմանալով ներսի տօթին, դուրս էին բերել իրանց մանուկների օրօրոցները, դրել էին ուռենիների ներքոյ, հոսող առուակի ափի մօտ, եւ իրանք նստած օրօրոցների մօտ, ոտքով օրօրում էին եւ ձեռքով կար էին կարում: Դրանցից երբեմն լսւում էին երգի խուլ ձայներ, որ նման էին թախծալի հառաչանքների: Դրանցից շատերն այն դժբախտ մայրերն էին, որոնց ամուսինները մաշւում են պանդխտութեան մէջ: Մի քանի դռների հանդէպ, ծառերի տակ, պառկեցրել էին հիւանդներ, որոնց գլուխը եւ կուրծքը պատած էին ուռենու տերեւներով, զովացնելու համար: Հիւանդների մօտ նստած էին դեռահաս աղջիկներ եւ դալար, սաղարթախիտ ոստերով զով էին տալիս նրանց երեսներին եւ քշում էին ճանճերին: Տարոայ եղանակը ազդել էր եւ Սիմոն պատոելիի վրայ, նա եւս իր շարժական դպրոցը դուրս էր բերել փողոցը եւ աշա-